ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից
կոլեգիայի 2014 թվականի հունիսի 27-ի նիստի

ք.Երևան 27 հունիսի 2014թ.

ժ. 17.00– 18:20

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀՀ գյուղատնտեսության նախարար Ս. Կարապետյանը

Մասնակցում էին՝

Կոլեգիայի անդամներ

Խոսրով Հարությունյան	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, Հայաստանի Հանրապետության հանրային խորհրդի անդամ
Գրիշա Բաղիյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ
Սամվել Գալստյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
Գառնիկ Պետրոսյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
Ռոբերտ Մակարյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
Արմեն Հարությունյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
Արտաշես Կիրակոսյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ղեկավար
Յուրա Ջավադյան	«Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի տնօրեն, Հայաստանի Հանրապետության հանրային խորհրդի անդամ
Աշոտ Ոսկանյան	Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրարային քաղաքականության ամբիոնի վարիչ
Ռոզա Ծառուկյան	Ֆերմերների ազգային միավորման /ՖԱՄ/ նախագահ
Գագիկ Սարդարյան	«Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն հիմնադրամի» տնօրեն
Հասմիկ Ջհանգիրյան	Ագրոարդյունաբերական համակարգի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Հակոբ Անդրեասյան	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր գործադիր տնօրեն
Երվանդ Թարվերդյան	<<Հայաստանի պահածոյագործների և հյութ

	արտադրողների միություն>> իրավաբանական անձանց միության նախագահ
Ավագ Հարությունյան	<<Հայ գինեգործների միություն>> իրավաբանական անձանց միության նախագահ

Հրավիրված էին՝

Ա.Պետրոսյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի խորհրդական
Վ.Ղուշչյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչության պետ
Հ.Ծպնեցյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի գյուղատնտեսության զարգացման ծրագրավորման վարչության պետ
Ա.Հովհաննիսյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անասնաբուծության և անասնաբուժության վարչության պետ
Գ. Հարությունյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչության պետ
Ա. Պետրոսյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ
Ա. Ավետիսյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետ
Կ. Ավետիսյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության պետ
Ա.Բաղդասարյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի հողերի օգտագործման և մելիորացիայի վարչության պետ
Ա.Շիրվանյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի սննդամթերքի անվտանգության բաժնի պետ
Ա. Պետրոսյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անտառային տնտեսության բաժնի պետ
Գ.Ղամարյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի առաջին բաժնի պետ
Դ. Սիմոնյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ
Մ. Մաթևոսյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրեն

1.2014 ԹՎԱԿԱՆԻ ՊՏՈՒՂԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ԵՎ ԽԱՂՈՂԻ ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Ռ. Մակարյան, Ա. Ոսկանյան, Ա. Հարությունյան, Ռ. Ծառուկյան, Ե. Թարվերդյան, Խ. Հարությունյան, Ս. Կարապետյան)

Ռ. Մակարյանն իր զեկույցում նշեց, որ ագրովերամշակող ընկերությունների կողմից 2013 թվականին մթերվել է 223947 տոննա պտուղբանջարեղեն և խաղող, այդ թվում՝ 167185 տոննա խաղող, 27970 տոննա բանջարեղեն, որից՝ 18970 տոննա լոլիկ և 28792 տոննա պտուղ, որից՝ 5189 տոննա խնձոր, 1921 տոննա դեղձ, 13039 տոննա ծիրան, 8644 տոննա այլ պտուղ և հատապտուղ: 2013 թվականի պտուղբանջարեղենի և խաղողի մթերման ծավալները 2012 թվականի համեմատ աճել են 3.7 տոկոսով: Բարձրացել են նաև մթերման միջին գները: 2013 թվականին արձանագրվել է նաև մթերվող պտուղբանջարեղենի և խաղողի դիմաց գյուղացիական տնտեսություններին կատարվող վճարումների գործընթացի բարելավում: Վճարումների մեծ մասը կատարվել են անմիջապես գնման պահին կամ 7-10 բանկային օրերի ընթացքում, իսկ մնացած վճարումները գրեթե ամբողջությամբ ավարտվել են մինչև տարեվերջ: Ընթացիկ տարում պտուղբանջարեղենի և խաղողի մթերումների գործընթացի կազմակերպման նպատակով իրականացվել են հետևյալ միջոցառումները՝

- կատարվել է պտուղբանջարեղենի և խաղողի մթերումների կանխատեսվող ծավալների մոնիթորինգ, ըստ որի 2014 թվականի մթերման պահանջարկը կազմում է շուրջ 75250.0 տոննա բանջարեղեն, որից՝ 60966.0 տոննա լոլիկ և 28979.0 տոննա պտուղ, որից՝ 6726.0 տոննա խնձոր, 4222.0 տոննա դեղձ, 9007.0 տոննա ծիրան, 9024 տոննա այլ պտուղ և շուրջ 190.0 հազար տոննա խաղող, որից՝ 4070.0 տոննա Արենի սորտի :

2014 թվականի հունիսի 26-ի դրությամբ կնքվել է 11965 պայմանգիր, որից 11381-ը՝ խաղողի և 584-ը՝ պտուղբանջարեղենի գնման: Պայմանագրերի շրջանակներում գյուղացիական տնտեսություններին տրամադրվել է 112.5 մլն. դրամ կանխավճար և 675.1 մլն. դրամի բուժանյութեր և այլ օժանդակություն: Ներկայնումս ընթացքի մեջ է բանջարեղենի մթերման գործընթացը : Ընթացիկ տարվա մթերումների կազմակերպման ուղղությամբ կատարված նախապատրաստական աշխատանքների, ինչպես նաև կանխատեսվող մթերման և համախառն բերքի ծավալների համադրումից ստացվում է, որ ընթացիկ տարվա պտուղբանջարեղենի մթերումները կանցնեն բավականին սահուն և առանց լուրջ խոչընդոտների: Գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրված պտղի, բանջարեղենի և խաղողի իրացման նպատակով մթերումների նախապատրաստական աշխատանքներին զուգահեռ աշխատանքներ են տարվում նաև դրանց արտահանման և վաճառքի աջակցության ուղղությամբ: 2014 թվականի հունիսի 26-ի դրությամբ հանրապետությունից արտահանվել է 24907.7 տոննա պտուղբանջարեղեն, խաղող և կարտոֆիլ, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշը գերազանցում է շուրջ 20 տոկոսով:

2014 թվականի հունիսի 8-ից Երևան քաղաքի Կասյան փողոցի վերին հատվածում վերսկսվել են յուրաքանչյուր շաբաթ և կիրակի գործող գյուղատնտեսական մթերքների բացօթյա շուկայի աշխատանքները, իսկ պահանջարկի առկայության դեպքում կգործարկվեն նաև այլ վայրերում:

Ընթացիկ տարում կազմակերպվել է բացօթյա գյուղատնտեսական 5 շուկա, որին գրանցվել են գյուղացիական շուրջ 289 տնտեսություններ՝ գյուղական 74 համայնքներից: Յուրաքանչյուր տոնավաճառի մասնակիցների կողմից վաճառքի է ներկայացվել շուրջ 45

տեսակի գյուղմթերք: Միջին հաշվով 1 տոնավաճառի ընթացքում իրացվել է 9-11 տոննա գյուղմթերք, ընդհանուր առմամբ՝ 47 տոննա:

ՀՀ վարչապետի մոտ 2014 թվականի հունիսի 21-ին կազմակերպվել է խորհրդակցություն խաղող վերամշակող ավելի քան 25 ընկերությունների ներկայացուցիչների հետ՝ խաղողի մթերումների և պատրաստի արտադրանքի արտադրության ու իրացման հետ կապված խնդիրների վերաբերյալ:

Առաջարկություններ

Խ. Հարությունյան՝

1. Կատարել նախնական հաշվարկ պտուղբանջարեղեն մթերող կազմակերպություններին հանձնված բերքի դիմաց գյուղացիական տնտեսությունների կողմից ստացվող եկամուտների մասին:

2.Պտուղբանջարեղեն մթերող կազմակերպություններին բերքի հանձնման գործում մանր գյուղացիական տնտեսությունների շահագրգռվածությունը բարձրացնելու նպատակով առաջնահերթությունը տալ դրանց հետ պայմանագրերի կնքմանը:

Ա. Ոսկանյան՝

Մշակել «Գյուղատնտեսական մթերքների իրացման և պահպանության մասին» ՀՀ օրենքի նախագիծ:

Ա. Հարությունյան՝

Մթերումների գործընթացը խթանելու նպատակով ՀՀ կառավարություն ներկայացնել առաջարկություն պտուղբանջարեղեն մթերող կազմակերպություններին արտոնյալ պայմաններով վարկեր տրամադրելու վերաբերյալ:

Ս. Կարապետյանը նշեց, որ վերջին 3 տարիների ընթացքում զգալի ավելացել է վերամշակող արդյունաբերական ընկերությունների կողմից գյուղատնտեսական մթերքների մթերման և Հայաստանի Հանրապետությունից արտահանման ծավալները: Մթերված գյուղատնտեսական մթերքների դիմաց վճարումները մթերող կազմակերպությունների կողմից հիմնականում կատարվել են հաստատված ժամանակացույցին համապատասխան: ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը մշտապես մոնիտորինգ է իրականացրել մթերման գործընթացի նկատմամբ:

Որոշվեց՝

Հավանություն տալ պտուղբանջարեղենի և խաղողի մթերումների կազմակերպմանն ուղղված ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից տարվող նախապատրաստական աշխատանքներին:

2. «Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մասին

(Ա. Պետրոսյան, Ս. Գալստյան, Ե. Թարվերդյան, Խ. Հարությունյան, Ա. Հարությունյան, Ս. Կարապետյան)

Ա. Պետրոսյանն իր զեկույցում նշեց, որ «Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը նպատակաուղղված է բնական միջավայրին համապատասխան անտառների կառավարվմանը, անտառային տարածքների հետևողական ընդլայնմանը, անտառային պաշարների բնական, շարունակական և անսպառ օգտագործմանը:

Սույն նախագծով սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության, անտառների կայուն կառավարման և վերահսկողության ոլորտում պետական լիազորված մարմինների, ինչպես նաև անտառների կայուն կառավարման ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կառավարման տարածքային մարմինների իրավասությունները:

Հարկ է նշել, որ օրենքի նախագծում ամրագրվում են հետևյալ կարևոր դրույթները.

1. Հայաստանի Հանրապետությունում անտառները և անտառային հողերն ունեն բազմագործառնական նշանակություն, որոնցից ոչ մեկը չի դիտարկվում իբրև գերիշխող, և դրանք կատարում են էկոհամակարգային ծառայություններ.

2.Անտառների գործառնական նշանակությունը սահմանվում է անտառկառավարման պլաններով, բազմագործառնական գոտիավորման միջոցով:

Նախագծում տարանջատվել և հստակեցվել են անտառային ֆոնդի պետական հաշվառման և անտառային պետական կադաստրի վարման դրույթները: Հստակեցվել են անտառային տնտեսության վարման սկզբունքները: Անտառային տնտեսության վարումն իրականացնելու համար նախատեսվում են երկարաժամկետ և տարեկան գործողությունների պլանների առկայություն: Նախագծով արգելվում է բաց եղանակով հանքավայրերի շահագործումը պետական և համայնքային անտառածածկ տարածքներում, ամրագրվում է ժամկետ, որի ընթացքում ծառազրկված անտառային հողերում պետք է իրականացվի անտառվերականգնման աշխատանքներ, նախապես ունենալով անտառվերականգնման նախագծեր, հստակեցվել և լրացվել են անտառօգտագործման տեսակներն անտառներում և անտառային հողերում:

Առաջարկություններ

Խ. Հարությունյան՝

1.Ստեղծել աշխատանքային խումբ «Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը մեկ անգամ ևս քննարկելու և առաջարկություններ ներկայացնելու նպատակով:

2. Նախագծից հանել «անտառների անսպառ օգտագործում» տերմինը:

3. Լրամշակել նախագիծը հաշվի առնելով, որ այն նպատակաուղղված պետք է լինի միմիայն Հայաստանի Հանրապետության անտառների պահպանությանը և ընդլայնմանը:

Ե. Թարվեդյան՝

Նախագիծը համաձայնեցնել հանքարդյունաբերության ոլորտի ընկերությունների հետ:

Ա. Հարությունյան՝

1. Տակառագործության բնագավառը Հայաստանի Հանրապետությունում զարգացնելու նպատակով ՀՀ կառավարություն ներկայացնել առաջարկություն՝ կաղնու արհեստական անտառներ տնկող ձեռնարկություններին պետական աջակցություն տրամադրելու մասին:

2.Նախագծում հստակեցնել անկախ հողերի նպատակային նշանակության կատեգորիայից անտառային տարածքների պահպանության ապահովման հարցը:

Ս. Կարապետյանը նշեց, որ Հայաստանի Հանրապետության Անտառային օրենսգիրքն ընդունվել է 2005 թվականի հոկտեմբերի 24-ին և մինչ օրս լրացումների և փոփոխությունների չի ենթարկվել: Ներկայումս անհրաժեշտություն է առաջացել առավել հստակեցնել անտառների կայուն կառավարման սկզբունքները: Այդ առումով ՀՀ գյուղատնտեսության նախարարության և ԳԳՄ ԿԿՀ ծրագրի համագործակցության շրջանակներում անտառների միջազգային փորձագետի կողմից մանրամասն վերլուծվել է անտառային օրենսգիրքը և կայուն կառավարման միջազգային ստանդարտներին համապատասխան առաջարկություններ ներկայացվել, որոնք ևս հաշվի են առնվել սույն նախագծի մշակման ժամանակ:

Վերը նշված նախագծի ընդունման դեպքում ակնկալվում է անտառային ոլորտի իրավական դաշտի կատարելագործում, լիազորությունների հստակեցում, անտառային տնտեսության վարման համակարգի բարեփոխում:

Որոշվեց

1. Վերանայել «Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:
2. «Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը քննարկել համապատասխան հասարակական կազմակերպությունների և շահագրգիռ այլ մարմինների հետ:

ԿՈԼԵԳԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿՈԼԵԳԻԱՅԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ. ԲԱԴԱԼՅԱՆ